

ԲԱԶՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԲՍՈՒՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԱԵՑ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 22.

1844

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նոր և օգտակար գիտություն

ԻՐԱՒՈՒՆՔ ունին անոնք որ կ'ըսեն թէ քիմիական կամ բնալուծական՝ արհեստին համար՝ մարդկօրէն անկարելի բան չկայ, անանկ որ շատ անգամ գրեթէ ոչնչէն բան մը կը ստեղծէ։ Ատաւի ու բրդեղէնի կտորները շատ ատենէ 'ի վեր է որ մէյմէկ բանի կուգան. զոր օրինակ մէկէն տեսակ տեսակ թղթեր կը շինուին, մէկալէն ալ՝ նորէն գլելով՝ զանազան բրդեղէններ. իսկ մետաքսէ՝ լաթերուն կտորուանքը բանի մը չէին գար ամենեւին։ Հիմա Տէլզեն¹ անունով իմաստուն բնալուծին հնարքովը՝ մետաքսէ լաթի կտորներն ալ նորէն կը շինուին նոր մետաքս ու կը գործուին. անոնցալ կտրրտուքները նորէն կը գործուին. ասանկով մետաքսը գրեթէ ամենեւին չկորսուիր կամ չփճանար։ Իսկ թէ ինչ է աս բանիս հնարքը, գիտնալու է որ Գոմմա-էլա² կամ առաձգական խէժ՝ ըստած նիւթը ինչ կերպով շինուած կամ գործուած ալ ըլլայ, նորէն կրնայ հալել՝ լուծուիլ

ու մանուիլ. և ասիկայ լուծող նիւթը՝ նոյն առաձգական խէժին ցքահան գործիքէ՝ հանուած հիւթն է։ Պարոն Տէլզենը մտածեր է որ մետաքսեղէնի կտորուանքն ալ նոյնպէս լուծէ, խէժի պէս զանգուած մը դարձնէ. և փորձով տեսեր է որ ասոր ալ լուծող նիւթը՝ շերամի խողակներուն հիւթն է՝ ցքահանէ ելած. որով մետաքսը կը հալի, կը շաղուի, հալած ապակիի պէս բան մը կը դառնայ, և կրնայ ամենաբարակ մանուիլ. ետքը օգտեսնելով կը պնդանայ, և առջի ամրութիւնը կ'առնէ։ Հոմ ու չներկած մետաքսը դիւրաւ կը լուծուի. դժուարութիւնը գունաւորները՝ և մանաւանդ սևերը լուծելն է, բայց ճարտար հնարողը աս դժուարութե ալ յաղթելու յոյս ունի։

Այնչափ մեծ է աս գիւտիս օգտակարութիւնն որ միայն Վաղղիայի համար եօթանասուն միլիոն ֆլանքի վաստակ կրնայ բերել. որովհետեւ Վաղղիացիք իրենց անթիւ գործարաններուն համար՝ գրեթէ այսչափ

¹ Դէլզէն։

² Delzenne.

³ Գ. Գոմմա-էլա. Gomme élastique. Տես հատոր Ա, էրես 307։

ստակ կուտան ու հոսմ մետաքսը դըր-
սէն կը բերեն . ուստի աս գիւտը մեր

դարուն խիստ երեւելի գիւտերէն մէ-
կը պիտի ըլլայ :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Պատկերներ :

ՊԱՆԿԱԹԵՒԻՒՆ կ'ըսուին ընդհանրա-
պէս ան կենդանածինները որ իրենց
թւերուն վրայ լայն մաշկ մը ունենա-
լով կրնան օդուն մէջ վերանալ ու
թռչիլ : Սամկօրէն աս կենդանիները
թռչնոց կարգը կը սեպուին , բայց ի-
րօք կատարեալ չորքոտանի են : Շա-
տը կուրծքերնուն՝ ոմանք ալ փորեր-

նուն վրայ ծիծեր ունին . ամէնքն ալ
գիշերային են , ու գլխի վար իջնելով
իրենց ետեւի ոտուրներովը պատիկամ
ծառի վրայ կը կաշին կը կենան :

Բնապատումները բոլոր մաշկա-
թւերուն կարգը երկու սեռ կը բաժ-
նեն . մէկ սեռին տակը եղածներուն
կապիտիս՝ կ'ըսեն , մէկաւորներուն չլի-
կամ բռն մաշկաթիւն : Սակաբիսնե-
րուն թւերը շատ լայն չեն , հապա-
միայն այնչափ որ անոնցմով կրնան օ-
դուն մէջ իրենք զիրենք քիչ մը բըռ-
նել , ու ծառէ ծառ թռչիլ . ասոնք

1 Բնապատումները ասոնց ընդհանուր անուն
մը տալ ուզելով յունական բառով շեռնաթիւն (Գղ.
Cheiroptère) կ'ըսեն . մենք մաշկաթիւն բառը 'ի նախ-
նեաց ունենալով՝ կրնանք ան բառին տեղը գործ-
ածել : Աւելի սովորական է մեզի Չլիթի կամ
Չլիթիւն , Չիլի , Չլիթի ըսելը (որ կենդանւոյն
ձայնէն առնուած կ'երևնայ) . Սամկօրէն « իլիթիս »
ալ կ'ըսուի . տճկ . իլիթի գոռոն , կամ էտիլի , լիլիտի
գոռոն , լիլիթիլի :

1 Գղ . յունական բարդութիւն Galeopithecus .

2 Գղ . Pteropode կամ Pterope , որ յոյն բառ
է , ու կը նշանակէ թևաթիւն կամ թևաթիւն :